ՆԱԽԱԳԻԾ

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ - Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասիին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է***.

1. Համաձայնություն տալ մասնակցելու 2023 թվականի հետևյալ սուբվենցիոն ծրագրերին.

1) «Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի թաղամասերի փողոցների, Նոր Խաչակապ բնակավայրի գերեզմանատուն տանող ճանապարհի, Ջրաշեն բնակավայրի փողոցների, Սարալանջ բնակավայրի գերեզմանատուն տանող ճանապարհի, Խնկոյան բնակավայրի գերեզմանատուն տանող ճանապարհի, Լեռնավան բնակավայրի փողոցների, Արևաշող բնակավյրի փողոցների, Ծաղկաբեր բնակավայրի փոողոցների տուֆ քարով սալարկում»,

2) «Սպիտակ, Լեռնանցք, Ջրաշեն, Արևաշող և Շիրակամուտ բնակավայրերի փողոցային լուսավորության գոյություն ունեցող համակարգերի ընդլայնում»,

3)«Սպիտակ համայնքի Լեռնանցք, Ջրաշեն, Հարթագյուղ և Շիրակամուտ բնակավայրերի թաղամասերի գազաֆիկացում»,

4) «Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավյրում նոր ավտոկայանատեղի կառուցում, Մեծ Պարնի բնակավայրի մշակույթի տան ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ»,

5) «Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի քաղաքային զբոսայգու վերանորոգում»,

6) «Սպիտակ համայնքի Սպիտակ բնակավայրի բազմաբնակարան շենքերի բակային տարածքների ասֆալտապատում և Ս.Ավետիսյան փողոցի ջրահեռացման համակարգի կառուցում, Լուսաղբյուր բնակավայրի ճանապարհների ասֆալտապատում և սելավատարների գաբինով կառուցում»,

7)«Սպիտակ համայնքի Քարաձոր բնակավայրի խմելու ջրի ցանցի վերանորոգում, Շենավան բնակավայրի խմելու ջրի ջրագծի փոխարինում, Ծաղկաբեր բնակավայրում խմելու ջրի ջրհավաք ավազանի և ջրագծերի կառուցում, Ջրաշեն բնակավայրի խմելու ջրի ներ ջրագծի կառուցում և ցանցավորում, Լեռնավան բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի ընդլայնում»,

8)«Սպիտակ համայնքի Կաթնաջուր բնակավայրի ոռոգման ջրի պոմպակայանի տեղադրում, Լեռնավան բնակավայրի ոռոգման ցանցի ընդլայնում, Շենավան բնակավայրի ոռոման համակարգի կառուցում, Սարամաեջ բնակավայրի ոռոգման ջրամբարների վերանորոգում, Արջահովիտ բնակավայրի ոռոգման ներքին ջրագծի ընդլայնում, Գոգարան բնակավայրի ոռոգման համակարգի կառուցում, Սարահարթ բնակավայրի ոռոգման համակարգի ընդլայնում և պոմպակայանի վերանորգում, Գեղասար բնակավայրի ոռոգման համակարգի ընդլայնում»: